Հաստատում եմ՝

Հիմնադրամի տնօրեն՝

_____ Գ. Գրիգորյան

«_____» _____ 20____ թ.

«Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամում հետազոտական և նախագծային աշխատանքների իրականացման ուղեցույց

Երևան 2024

Սույն ուղեցույցը նպատակ ունի ապահովել «Ֆրանս-հայկական ուսումնական կենտրոն» հիմնադրամում հետազոտական և նախագծային աշխատանքների արդյունավետ կազմակերպումն ու իրականացումը:

Հիմնադրամի խնդիրը ոչ միայն մասնագիտական կրթության բարձր մակարդակի ապահովումն է, այլ նաև ուսանողների մտածողության զարգացումը, որը վերջիններիս մոտ ձևավորում է կարողություններ և հմտություններ՝ ունեցած գիտելիքները ինքնուրույն համալրելու, դրանք ճիշտ օգտագործելու, մասնագիտական խնդիրներ լուծելու համար:

Հիմնադրամի հավակնությունն է հետազոտական ծրագրերի և աշխատանքների ներդրմամբ նպաստել Հիմնադրամի զարգացմանը՝ ստեղծելով հետազոտական պրոդուկտներ, որոնք կնպաստեն մասնագիտական կրթության որակի բարձրացմանը, արժևորմանը, ոլորտի նկատմամբ տեսանելիության և գրավչության ավելացմանը:

Հետազոտական աշխատանքը կիրառական նշանակություն ունեցող և գործնական խնդիրների լուծմանը միտված ինքնուրույն անհատական կամ խմբային աշխատանք է՝ տեսական և/կամ գործնական լուծման ակնկալիքով:

Հիմնադրամը կարևորում է ինչպես մասնագիտական հետազոտությունների, այնպես էլ՝ հանրակրթական առարկաների շրջնակներում նախագծային աշխատանքների իրականացումը:

Հետազոտական և նախագծային աշխատանքների իրականացման ընթացքում ուսանողը պետք է՝

- հավաքագրի տվյալներ,
- առաջադրի խնդիրներ,
- պլանավորի և կազմակերպի, իրականացնի և ստուգի աշխատանքը,
- ներկայացնի միջանկյալ հաշվետվություններ,
- ինքնաքննադատություն իրականացնի,
- բարելավի աշխատանքը:

Հետազոտական և նախագծային աշխատանքների իրականացումը պետք է թույլ տա ուսանողին՝

- ձեռք բերել ինքնուրույնություն,
- կրել պատասխանատվություն,
- դիմակայել խոչընդոտներին,
- ձեռք բերել նոր գիտելիքներ,
- իրեն արժեվորված զգալ:

Հետազոտական և նախագծային աշխատանքների ղեկավար հանդիսացող դասավանդողները պետք է՝

- համագործակցեն ուսանողի հետ՝ վերջինիս աջակցելու նպատակով,
- ուղղորդեն ուսանողին,
- համակարգեն աշխատանքները,
- մոտիվացնեն ուսանողին,
- խրախուսեն վերջինիս հուսահատության պահին,
- մասնակցեն ուսանողի կողմից կատարվող վերլուծական աշխատանքին:

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Հանրակրթական առարկաների շրջանակներում իրականացվող նախագծային աշխատանքներին ուսանողները ներգրավվում են ոչ պարտադիր սկզբունքով՝ ըստ նախասիրությունների:

Յուրաքանչյուր ուստարվա ապրիլ-մայիս ամիսներին հանրակրթական առարկաների դասավանդողները ներկայացնում են առնվազն մեկ նախագիծ (մեկ դասավանդողի կողմից ներկայացված նախագծերի առավելագույն քանակը 3-ն է)՝ լրացնելով Հավելված 1-ում ներկայացված ձևաթուղթը: Նախագծի իրականացման ժամանակահատվածը հաջորդ ուսումնական տարին է:

Նախագծի ղեկավար է հանդիսանում նախագիծը ներկայացնող դասավանդողը: Կարող է ներկայացվել համատեղ նախագիծ՝ դասավանդողների համաղեկավարությամբ:

Ուսումնամեթոդական խորհրդի նիստին հավանության արժանացած նախագծերը հաստատում է Հիմնադրամի տնօրենը:

Հաստատվելուց հետո սեպտեմբեր ամսին ապահովվում է նախագծային թեմաների հասանելիությունը ուսանողներին էլեկտրոնային և թղթային եղանակով: Մեկամսյա ժամկետում հետազոտական աշխատանքների համակարգողը ուսանողներին գրանցում է հաստատված նախագծերից մեկին՝ ըստ ուսանողի ընտրության: Հոկտեմբեր ամսին ուսանողների ցուցակները ներկայացվում են համապատասխան նախագծերի ղեկավարներին:

Նախագծային աշխատանքները կարող են իրականացվել ինչպես անհատական, այնպես էլ խմբային եղանակով: Խմբային նախագծի մասնակից ուսանողների առավելագույն թիվը 10-ն է:

Նախագծում կարող են ներգրավված լինել մեկից ավելի դասավանդողներ՝ ապահովելով միջառարկայական կապերը:

Նախագծային աշխատանքի նպատակը, վերջնարդյունքի ներկայացման ձևաչափը, ծավալը, տևողությունը, մասնակից ուսանողների քանակը որոշում է դասավանդողը: Նախագծին կից դասավանդողը լրացնում է աշխատանքների իրականացման պլան (ձևաթուղթը տե՛ս Հավելված 2-ում):

Նախագծային աշխատանքների իրականացման վերահսկումը կատարվում է նախագծի ղեկավար դասավանդողի կողմից ըստ աշխատանքների իրականացման պլանի:

Նախագծային աշխատանքների իրականացման համար նախատեսված ժամկետի ավարտին աշխատանքները ենթակա են պարտադիր բանավոր ներկայացման:

Բանավոր ներկայացման ժամանակացույցը և հանձնաժողովների անդամների ցանկը հասանելի են լինում ուստարվա սկզբին:

Բանավոր ներկայացումից առնվազն 10 օր առաջ աշխատանքի ամփոփ բնութագիրը սահիկաշարի տեսքով տրամադրվում է հանձնաժողովի անդամներին:

Նախագծային աշխատանքները պահպանվում են ուսումնական մասում 3 տարի ժամկետով:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄՈԴՈՒԼՆԵՐԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Մասնագիտական հետազոտությունների իրականացումը պարտադիր է «Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամի բոլոր ուսանողների համար: Ուսումնառության տարիների ընթացքում յուրաքանչյուր ուսանող պարտադիր կերպով իրականացնում է առնվազն 1 մասնագիտական հետազոտական աշխատանք:

Յուրաքանչյուր ուստարվա ապրիլ-մայիս ամիսներին մասնագիտական մոդուլների դասավանդողները ներկայացնում են առնվազն մեկ թեմա (մեկ դասավանդողի կողմից հաստատմանը ներկայացված թեմաների առավելագույն քանակը 3-ն է)՝ լրացնելով Հավելված 1-ում ներկայացված ձևաթուղթը: Հետազոտության իրականացման ժամանակահատվածը հաջորդ ուսումնական տարին է:

Ուսումնամեթոդական խորհրդի նիստին հավանության արժանացած հետազոտական աշխատանքները հաստատում է Հիմնադրամի տնօրենը:

Հետազոտական աշխատանքի ղեկավար է հանդիսանում մասնագիտական մոդուլների այն դասավանդողը, ով հաստատման է ներկայացնում հետազոտության թեման:

Հետազոտական աշխատանքներ կարող են իրականացվել համաղեկավարությամբ:

Հետազոտական աշխատանքներում կարող են ներգրավված լինել հանրակրթական առարկաների դասավանդողներ:

Ելնելով հետազոտական աշխատանքի բնույթից՝ աշխատանքի իրականացման ընթացքում ներքին և արտաքին այլ դերակատարներ ևս կարող են ներգրավվել:

Հաստատվելուց հետո սեպտեմբեր ամսին ապահովվում է հետազոտական թեմաների հասանելիությունը ուսանողներին էլեկտրոնային և թղթային եղանակով: Մեկամսյա ժամկետում հետազոտական աշխատանքների համակարգողը ուսանողներին գրանցում է հաստատված հետազոտական աշխատանքներից մեկին՝ ըստ ուսանողի ընտրության: Հոկտեմբեր ամսին ուսանողների ցուցակները ներկայացվում են համապատասխան հետազոտությունների ղեկավարներին:

Յուրաքանչյուր ուստարվա երկրորդ կիսամյակի սկզբին ուսումնամեթոդական խորհրդի նիստում որոշվում է հետազոտական աշխատանքների ընդհանուր թեմատիկան («Էկոլոգիա», «Ես՝ ապագա ձեռներեց», «Պատմական ժառանգություն» և այլն), որը տվյալ ուստարում պարտադիր է բոլոր հետազոտական աշխատանքների համար:

Հետազոտական աշխատանքները կարող են իրականացվել ինչպես անհատական, այնպես էլ՝ խմբային եղանակով:

Հետազոտական աշխատանքներն իրականացվում են նախապես կազմված իրականացման պլանին համապատասխան (ձևաթուղթը տե՛ս Հավելված 2-ում):

Հետազոտական աշխատանքների իրականացման համար նախատեսված ժամկետի ավարտին աշխատանքները ենթակա են պարտադիր բանավոր ներկայացման:

Բանավոր ներկայացման ժամանակացույցը և հանձնաժողովների անդամների ցանկը հասանելի են լինում ուստարվա սկզբին:

Բանավոր ներկայացումից առնվազն 10 օր առաջ աշխատանքի ամփոփ բնութագիրը սահիկաշարի տեսքով տրամադրվում է հանձնաժողովի անդամներին:

Ներկայացման ձևաչափն ընտրում է ուսանողը (ուսանողները)՝ նախապես համաձայնեցնելով ղեկավարի հետ:

Հետազոտական աշխատանքները պահպանվում են ուսումնական մասում 5 տարի ժամկետով:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ և ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Հետազոտական և նախագծային աշխատանքները գնահատվում են՝ համաձայն հավելված 3-ում ներկայացված գնահատման չափանիշների:

Եթե աշխատանքը թիմային է, ապա թիմի բոլոր անդամները ստանում են նույն գնահատականը:

Գնահատումն իրականացնում են հետազոտական կամ նախագծային աշխատանքի ղեկավարը և հանձնաժողովը:

Անկախ վերջնարդյունքի ներկայացման ձևաչափից՝ յուրաքանչյուր հետազոտական և նախագծային աշխատանք ենթակա է բանավոր ներկայացման: Բանավոր ներկայացմանը հատկացվում է առավելագույնը 10 րոպե:

Գնահատումն իրականացվում է բանավոր ներկայացման օրը:

Տվյալ ուստարվա ընթացքում լավագույնը ճանաչված հետազոտական կամ նախագծային աշխատանք իրականացրած ուսանողները կարժանանան խրախուսանքի:

Իրականացված հետազոտական և նախագծային աշխատանքների թեմաները և ամփոփ նկարագրերը հասանելի են Հիմնադրամի կայք-էջում:

ՌԵՖԵՐԱՏՆԵՐ

Ռեֆերատը հետազոտական աշխատանք է, որը ենթադրում է որևէ թեմայի վերաբերյալ մեկ կամ մեկից ավելի աղբյուրներից քաղված տեղեկատվություն:

Ռեֆերատներ հանձնարարվում են ինչպես հանրակրթական, այնպես էլ մասնագիտական առարկաների շրջանակներում:

Ռեֆերատների թեմաները ընտրում են դասավանդողները յուրաքանչյուր ուստարվա մեկնարկին:

Ռեֆերատները կարող են ներկայացվել ինչպես ձեռագիր, այնպես էլ տպագիր եղանակով :

Ռեֆերատների ծավալը չպետք է գերազանցի 10 էջը:

Ռեֆերատի յուրաքանչյուր էջ պետք է լինի A4 (210x297 մմ) չափի և ունենա լուսանցքներ. ձախից՝ 3 սմ, աջից՝ 1,5 սմ, վերևից՝ 2 սմ, ներքևից՝ 2 սմ: Տպագիր աշխատանքների հիմնական տեքստը պետք է շարադրվի 12 տառաչափով, միջտողային հեռավորությունը պետք է լինի 1,5: Մեջբերումների համար օգտագործվող չակերտներն են՝ «…..»:

Ռեֆերատը կարող է պարունակել նկարներ, աղյուսակներ, դիագրամներ:

Նկարների քանակը չպետք է գերազանցի 4-ը: Նկարի առավելագույն չափսը 148x210 մմ է:

Ռեֆերատը պետք է ունենա՝

- տիտղոսաթերթ, որի վրա նշված է ուսումնական տարին, ուսումնական հաստատության անվանումը, ռեֆերատի վերնագիրը, առարկան, ուսանողի մասնագիտությունը, կուրսը, անունը, ազգանունը, դասավանդողի անունը, ազգանունը,
- ներածություն, որտեղ ներկայացվում է ուսումնասիրվող նյութի հակիրճ նկարագիրը,
- ընդհանուր բովանդակություն, որտեղ ներկայացվում են ուսումնասիրվող նյութին վերաբերող փաստեր,
- եզրակացություն, որը պարունակում է ուսումնասիրված նյութի մասին ընդհանուր գաղափարներ և վերլուծություն,
- գրականության և օգտագործված այլ աղբյուրների ցանկ:

Ռեֆերատները բանավոր ներկայացվում են տվյալ առարկայի դասապրոցեսի ընթացքում:

Ռեֆերատները ստանում են միավորային գնահատում (10 բալանոց համակարգ):

Ռեֆերատները պահպանվում են ուսումնական մասում 3 տարի ժամկետով:

Հավելված 1

	Ուսումնական տարի՝		
	1.	Նախագծի/հետազոտական աշխատանքի անվանումը՝	
	2.	Ղեկավարը (ղեկավարները)՝	
	3.	Ներգրավված դասավանդողները (նշել նաև առարկան)՝	
	4.	Նպատակը (ները)	
	5.	Վերջնարդյունքը (ները)	
	6.	Մասնակիցների թիվը	
	7.	Տևողությունը	
	8.	Առկա հանդիպումների քանակը	
	9.	Ներկայացման ձևաչափը (լրացվում է նախագծային աշխատանքների դեպքում)	

Հավելված 2

Նախագծային /հետազոտական աշխատանքների իրականացման պլան

<table>
<tr><td></td><td colspan="3">Ուսումնական տարի՝</td></tr>
<tr><td></td><td colspan="3">Նախագծի/հետազոտական աշխատանքի անվանումը՝</td></tr>
<tr><td></td><td colspan="3">Նպատակը՝</td></tr>
<tr><td></td><td colspan="3">Ղեկավարը (ղեկավարները)՝</td></tr>
<tr><td></td><td colspan="3">Ներգրավված դասավանդողները (նշել առարկան և մանրամասնել դերը)</td></tr>
<tr><td></td><td colspan="3">Մասնակից ուսանողներ (ԱԱՀ, կուրս)</td></tr>
<tr><td rowspan="15">Նախագծի ընթացք</td><td rowspan="5"></td><td rowspan="5">Աշխատանքային խմբեր (եթե կան)</td><td>1.</td><td></td></tr>
<tr><td>2.</td><td></td></tr>
<tr><td>3.</td><td></td></tr>
<tr><td>4.</td><td></td></tr>
<tr><td>5.</td><td></td></tr>
<tr><td rowspan="5"></td><td rowspan="5">Խնդիրներ (քայլեր)</td><td>1.</td><td></td></tr>
<tr><td>2.</td><td></td></tr>
<tr><td>3.</td><td></td></tr>
<tr><td>4.</td><td></td></tr>
<tr><td>5.</td><td></td></tr>
<tr><td rowspan="6"></td><td rowspan="6">Ժամանակա ցույց</td><td></td><td></td></tr>
<tr><td></td><td></td></tr>
<tr><td></td><td></td></tr>
<tr><td></td><td></td></tr>
<tr><td></td><td></td></tr>
<tr><td></td><td></td></tr>
<tr><td></td><td></td><td>Վերջնարդյունքի ներկայացման ձևաչափ</td><td colspan="2"></td></tr>
</table>

Հավելված 3

Չափանիշ	Գերազանց	Լավ	Բավարար	Բարելավման ենթակա
Պլանավորում (գնահատվում է նախագծի ղեկավարի կողմից)	Խնդիրների (քայլերի) ձևակերպումը, հաջորդականությունը, ժամանակի բաշխումը, աղբյուրների ընտրությունը, աշխատանքի բաշխումը (խմբային հետազոտությունների դեպքում) իրականացված են ամբողջությամբ:	Խնդիրների (քայլերի) ձևակերպումը, հաջորդականությունը, ժամանակի բաշխումը, աղբյուրների ընտրությունը, աշխատանքի բաշխումը (խմբային նախագծերի դեպքում) հիմնականում իրականացված են ոչ էական թերություններով:	Խնդիրների (քայլերի) ձևակերպումը, հաջորդականությունը, ժամանակի բաշխումը, աղբյուրների ընտրությունը, աշխատանքի բաշխումը (խմբային նախագծերի դեպքում) իրականացված են էական թերություններով:	Խնդիրների (քայլերի) ձևակերպումը, հաջորդականությունը, ժամանակի բաշխումը, աղբյուրների ընտրությունը, աշխատանքի բաշխումը (խմբային նախագծերի դեպքում) իրականացված են մասամբ և էական թերություններով :
1 միավոր	1	0.75	0.5	0.25
Ընթացքը (գնահատվում է նախագծի ղեկավարի կողմից)	Աղբյուրների ուսումնասիրումը, տվյալների հավաքագրումը, ընթացիկ խնդիրների առաջադրումը և լուծումը, ինքնուրույնությունը, ժամանակի կառավարումը, թիմային աշխատանքը (խմբային հետազոտությունների դեպքում), շփումը այլ	Աղբյուրների ուսումնասիրումը, տվյալների հավաքագրումը, ընթացիկ խնդիրների առաջադրումը և լուծումը, ինքնուրույնությունը, ժամանակի կառավարումը, թիմային աշխատանքը (խմբային հետազոտությունների	Աղբյուրների ուսումնասիրումը, տվյալների հավաքագրումը, ընթացիկ խնդիրների առաջադրումը և լուծումը, ինքնուրույնությունը, ժամանակի կառավարումը, թիմային աշխատանքը (խմբային հետազոտությունների	Աղբյուրների ուսումնասիրումը, տվյալների հավաքագրումը, ընթացիկ խնդիրների առաջադրումը և լուծումը, ինքնուրույնությունը, ժամանակի կառավարումը, թիմային

	դերակատարների հետ իրականացված են լիարժեք:	դեպքում), շփումը այլ դերակատարների հետ իրականացված են են ոչ էական թերություններով:	դեպքում), շփումը այլ դերակատարների հետ իրականացված են են էական թերություններով:	աշխատանքը (խմբային հետազոտությունների դեպքում), շփումը այլ դերակատարների հետ իրականացված են են մասամբ և էական թերություններով:
3 միավոր	3	2	1	0.5
Բովանդակություն	Բովանդակությունը ամբողջովին համապատասխանում է թեմային:	Բովանդակությունը համապատասխանում է թեմային, կան ոչ էական թերություններ:	Բովանդակությունը համապատասխանում է թեմային, կան էական թերություններ:	Բովանդակությունը մասամբ համապատասխանում է թեմային, կան էական թերություններ:
3 միավոր	3	2	1	0.5
Վերջնարդյունքի ներկայացման ձևաչափ	Վերջնարդյունքի ներկայացման ձևաչափը ամբողջովին արտացոլում է թեմայի բովանդակությունը:	Վերջնարդյունքի ներկայացման ձևաչափը ամբողջովին արտացոլում է թեմայի բովանդակությունը ոչ էական թերություններով:	Վերջնարդյունքի ներկայացման ձևաչափը արտացոլում է թեմայի բովանդակությունը էական թերություններով:	Վերջնարդյունքի ներկայացման ձևաչափը արտացոլում է թեմայի բովանդակությունը մասամբ և էական թերություններով:
1 միավոր	1	0.75	0.5	0.25
Բանավոր ներկայացում	Նյութի ազատ և անկաշկանդ ներկայացումը, շարադրանքի տրամաբանական շարունակությունը,	Նյութի ազատ և անկաշկանդ ներկայացումը, շարադրանքի տրամաբանական	Նյութի ազատ և անկաշկանդ ներկայացումը, շարադրանքի տրամաբանական	Նյութի ազատ և անկաշկանդ ներկայացումը, շարադրանքի

	անհրաժեշտության դեպքում տերմինների կիրառումը, կատարված աշխատանքի վերլուծությունը, հանձնաժողովի հարցերի պատասխանները ներկայացվում են լիարժեք:	շարունակությունը, անհրաժեշտության դեպքում տերմինների կիրառումը, կատարված աշխատանքի վերլուծությունը, հանձնաժողովի հարցերի պատասխանները ներկայացվում են ոչ էական թերություններով:	շարունակությունը, անհրաժեշտության դեպքում տերմինների կիրառումը, կատարված աշխատանքի վերլուծությունը, հանձնաժողովի հարցերի պատասխանները ներկայացվում են էական թերություններով:	տրամաբանական շարունակությունը, անհրաժեշտության դեպքում տերմինների կիրառումը, կատարված աշխատանքի վերլուծությունը, հանձնաժողովի հարցերի պատասխանները ներկայացվում են ոչ լիարժեք և էական թերություններով:
2 միավոր	2	1.5	1	0.5